Каменноостровскiй, 30.

II

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ

Մխ.-երկս. դպրոցների

**ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ**

---

**№ 80**

**25 նոյեմբերի 1912 թ.**

Մեծ Ղարաքիլիսա.

---

Մեծայարգ պ. Տիգրան Նա-
զարեան

Առաջիկայ դեկտեմբերի 1-ին
շրջանիս բոլոր ծխական դպրոց-

ների մասնակցութեամբ, տեղում կայանալու է տառերի գիւտի 1500-ամեակին և հայ տպագրութեան 400-ամեակին նուիրուած գրական-գեղագիտական ցերեկոյթ։

Մանկավարժական ժողովը պարտք է դրել վրաս դիմելու Ձեզ խնդրելու, մեծարգոյ Տէր, հնարաւոր չէ՞ք գտնի «Աղբիւրի» յօբելեանական համարներից և Ձեր հրատարակած Հայ գործիչների պատկերներից նուիրաբերել հանդէսի օրը աշակերտ-աշակերտուհիներին բաժանելու համար։

Սրտին յարգանքներով՝

Հ. Ամատունի